

Խորհրդի 1996 թվականի դեկտեմբերի 17-ի 96/93/ԵՀ հրահանգ

**Կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող ապրանքների
հավաստագրման մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը
եւ, մասնավորապես, դրա 43-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը²,

քանի որ Խորհրդի 1989թվականի դեկտեմբերի 11-ի 89/662/ԵՏՀ հրահանգը
ներհամայնքային առեստրում ներքին շուկայի ձեւավորման գործընթացն
ավարտելու նպատակով անասնաբուժական ստուգումների վերաբերյալ, եւ³
Խորհրդի 1990թ.-ի հունիսի 26-ի 90/425/ԵՏՀ հրահանգը ներքին շուկայի
ձեւավորման գործընթացը ավարտելու նպատակով որոշ կենդանիների եւ
կենդանական արտադրանքի ներհամայնքային առեստրի համար կիրառելի
անասնաբուժական եւ զոոտեխնիկական ստուգումների վերաբերյալ⁴
պարտավորեցնում են արտադրող կամ առաքող անդամ պետությանն
ապահովելու, որ անասնաբուժական ստուգումները եւ, որտեղ անհրաժեշտ է,
հավաստագրումը տեղի ունենան պատշաճ կերպով,

քանի որ կենդանիների եւ կենդանական արտադրանքի ներքին շուկայի
անխափան գործունեությունն ապահովելու համար անդամ պետությունները

¹ ՊՏ թիվ C 373, 29.12.1994թ., էջ 16:

² ՊՏ թիվ C 56, 06.03 1995թ., էջ 165:

³ ՊՏ թիվ L 395, 30.12. 1989թ., էջ 13: Վերջին անգամ թիվ 92/118/ԵՏՀ հրահանգով
(ՊՏ թիվ L 62, 15. 03.1993թ., էջ 49) փոփոխված հրահանգ:

⁴ ՊՏ թիվ L 224, 18. 08.1990թ., էջ 29: Վերջին անգամ թիվ 92/118/ԵՏՀ հրահանգով
փոփոխված հրահանգ :

պետք է հնարավորություն ունենան ամբողջությամբ հիմնվելու արտադրման եւ առաքման վայրի հավաստագրման ամբողջականության վրա,

քանի որ այս նպատակը անդամ պետությունները չեն կարող իրականացնել առանձին-առանձին. քանի որ, հետեւաբար, Համայնքային օրենսդրության համաձայն, իրավասու մարմինների եւ հավաստագիր տրամադրող պաշտոնյաների պարտավորությունները սահմանող եւ կենդանիներին ու կենդանական արտադրանքին վերաբերող ընդհանուր կանոններ պետք է ընդունվեն,

քանի որ նպատակահարմար է ապահովել, որ երրորդ երկրի հավաստագիր տրամադրող պաշտոնյաների կողմից կիրառվող կանոններում եւ սկզբունքներում սահմանվեն այնպիսի երաշխիքներ, որոնք առնվազն համարժեք են սույն Հրահանգում սահմանված կանոններին եւ սկզբունքներին;

եւ քանի որ արդյունավետ միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ կեղծ կամ մոլորեցնող հավաստագրումից խուսափելու համար,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույն Հրահանգով սահմանվում են անասնաբուժական օրենսդրությամբ պահանջվող հավաստագրերի տրամադրման կանոնները:

Հոդված 2

1. Սույն Հրահանգի նպատակներով՝

«անասնաբուժական օրենսդրություն» նշանակում է 89/662/ԵՏՀ հրահանգի Ա հավելվածում եւ 90/425/ԵՏՀ հրահանգի Ա եւ Բ հավելվածներում նշված օրենսդրությունները:

«հավաստագիր տրամադրող պաշտոնյա» նշանակում է անասնաբուժական պետական տեսուչ կամ անասնաբուժական բնագավառի օրենսդրությամբ

նախատեսված դեպքերում, հավաստագրերը կնքելու համար իրավասու մարմնի կողմից լիազորված ցանկացած այլ անձ:

2. Ի լրումն 1-ին պարբերության մեջ նշված սահմանումների՝ 89/662/ԵՏՀ եւ 90/425/ԵՏՀ հրահանգների 2-րդ հոդվածում նշված սահմանումները նույնպես կիրառվում են համապատասխան փոփոխություններով:

Հոդված 3

1. Իրավասու մարմինն ապահովում է, որ հավաստագիր տրամադրող պաշտոնյաները բավարար չափով տեղյակ լինեն անասնաբուժական գծով օրենսդրությանը այն կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող արտադրանքի առումով, որոնք պետք է անցնեն հավաստագրում եւ, ընդհանուր առմամբ, տեղեկացված լինեն հավաստագրեր կազմելու եւ դրանք տրամադրելու հետ կապված կանոններին ու, հարկ եղած դեպքում՝ նախքան հավաստագրեր տրամադրելն իրականացվող հարցումների, թեստերի ու ուսումնասիրությունների բնույթին եւ ծավալին:

2. Հավաստագիր տրամադրող պաշտոնյաներն իրավունք չունեն հավաստագրելու այնպիսի տվյալներ, որոնց մասին նրանք իրազեկված չեն կամ որոնց մասին ունեցած գիտելիքները չեն կարող ճշտվել:

3. Հավաստագիր տրամադրող պաշտոնյաներն իրավունք չունեն ստորագրելու դատարկ կամ կիսատ հավաստագրեր, կամ կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող ապրանքների մասին այնպիսի հավաստագրեր, որոնք չեն ենթարկվել տեսչական ստուգման կամ որոնք ընդունվել են առանց իրենց կողմից ստուգվելու: Եթե հավաստագիրը ստորագրվել է մեկ այլ հավաստագրի կամ թույլտվության հիման վրա, ապա հավաստագիր տրամադրող պաշտոնյան պետք է իր տնօրինության տակ ունենա այդ փաստաթուղթը՝ նախքան հավաստագիրը ստորագրելը:

4. Սույն հոդվածի ոչ մի դրույթ չի կարող խանգարել անասնաբուժական պետական տեսուչին հավաստագրելու այնպիսի տվյալներ, որոնք.

պարզաբանվել են 1-3-րդ պարբերությունների հիման վրա իրավասու մարմնի կողմից լիազորված եւ այդ մարմնի ենթակայության տակ գործող մեկ այլ անձի կողմից՝ պայմանով, որ հավաստագիր տրամադրող մարմինը հնարավորություն ունենա ստուգելու տվյալների իսկությունը. կամ

ձեռք են բերվել դիտանցման ծրագրերի համատեքստում, պաշտոնապես ճանաչված որակի ապահովման համակարգերի հիման վրա կամ համաճարակաբանական հետազոտության համակարգի միջոցով,

եթե դրանք թույլատրված են անասնաբուժական օրենսդրությամբ:

5. Սույն հոդվածը կիրարկելու համար մանրամասն կանոնները պետք է ընդունվեն 7-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

Հոդված 4

1. Կողմերի իրավասու մարմիններն անհրաժեշտ քայլեր պետք է ձեռնարկեն՝ հավաստագրման ամբողջականությունն ապահովելու համար: Մասնավորապես, նրանք պետք է ապահովեն, որ իրենց կողմից նշանակված հավաստագիր տրամադրող պաշտոնյաները՝

ունենան այնպիսի կարգավիճակ, որը կապահովի նրանց անկողմնակալությունը եւ այն, որ նրանք անմիջական առետրային շահ չունենան հավաստագրման ենթակա կենդանիների կամ ապրանքների հարցում, կամ դրանց ծագման հողինգային ընկերություններում կամ հաստատություններում. եւ

լիակատար իրազեկված լինեն իրենց կողմից ստորագրվող յուրաքանչյուր հավաստագրի բովանդակության կարեւորության մասին:

2. Հավաստագրերը կազմվում են հավաստագիր տրամադրող պաշտոնյայի համար առնվազն հասկանալի լեզվով եւ առնվազն նպատակակետ հանդիսացող երկրի պաշտոնական լեզուներից որեւէ մեկով:

3. Յուրաքանչյուր իրավասու մարմին պետք է իրավասություն ունենա հավաստագիր տրամադրելու իրավասությունը կապելու հավաստագիր տրամադրող պաշտոնյայի հետ եւ ապահովելու, որ տրամադրված բոլոր

հավաստագրերի պատճեններն առկա լինեն իր կողմից սահմանված ժամանակահատվածի ընթացքում:

Հոդված 5

1. Անդամ պետությունները պետք է նման ստուգումներ անցկացնեն եւ պետք է ունենան վերահսկման այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ կանխելու կեղծ եւ շփոթեցնող հավաստագրերի տրամադրումը, ինչպես նաեւ կեղծված հավաստագրերի թողարկումն ու օգտագործումը, որոնք նախատեսված են անասնաբուժական բնագավառի օրենսդրության նպատակներով տրամադրելու համար:

2. Չսահմանափակելով որեւէ իրավական վարույթի կամ պատժամիջոցների գործողությունը՝ իրավասու մարմինները պետք է իրականացնեն հետաքննություններ կամ ստուգումներ եւ ձեռնարկեն միջոցներ՝ իրենց ուշադրությանը ներկայացված կեղծ կամ շփոթեցնող հավաստագրի տրամադրման ցանկացած դեպք պատժելու համար: Նման միջոց կարող է լինել վկայագիր տրամադրող պաշտոնյաների պարտավորությունների ժամանակավոր կասեցումը՝ մինչեւ հետաքննության ավարտը:

Մասնավորապես, եթե ստուգումների արդյունքում պարզվել է, որ

ա) հավաստագիր տրամադրող պաշտոնյան միտումնավոր կեղծ հավաստագիր է տրամադրել, ապա իրավասու մարմինը պետք է ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ հնարավորինս ապահովելու, որ տվյալ անձը չկարողանա կրկնել իրավախախտումը:

բ) եթե ստուգումների արդյունքում պարզ է դարձել, որ անձը կամ կազմակերպությունը կեղծարար ճանապարհով օգտագործել կամ փոփոխել է պաշտոնական հավաստագիրը, իրավասու մարմինն իր հնարավորության սահմաններում ձեռնարկում է անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որ այդ անձը կամ ձեռնարկությունը չկարողանա կրկնել իրավախախտումը: Նման միջոց կարող է լինել տվյալ անձին կամ ձեռնարկությանը հետագայում պաշտոնական հավաստագիր տալը մերժելը:

Հոդված 6

Համայնքի անասնաբուժական բնագավառի օրենսդրությամբ նախատեսված ստուգումների եւ Համայնքի ու երրորդ երկրների միջեւ կնքված համարժեքության համաձայնագրերով նախատեսված աուդիտն իրականացնելու համատեքստում Հանձնաժողովն ապահովում է, որ երրորդ երկրի հավաստագիր տրամադրող պաշտոնյաների կողմից կիրառվող կանոններում ու սկզբունքներում սահմանվեն այնպիսի երաշխիքներ, որոնք առնվազն համարժեք կլինեն սույն Հրահանգում շարադրված կանոններին եւ սկզբունքներին:

Եթե 90/675/ԵՏՀ եւ 91/496/ԵՏՀ հրահանգներով նախատեսված սույն տեսչական ստուգումներից եւ (կամ) աուդիտներից կամ փորձարկումներից պարզվի, որ երրորդ երկրի հավաստագիր տրամադրող պաշտոնյաները չեն կատարել այս սկզբունքները, ապա լրացուցիչ երաշխիքներ կամ հատուկ պահանջներ կարող են սահմանվել սույն Հրահանգի 7-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն:

Հոդված 7

Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգին հղում կատարելու դեպքում Խորհրդի 68/361/ԵՏՀ⁵ որոշմամբ նշանակված՝ Անասնաբուժության գծով մշտական հանձնաժողովը կգործի համաձայն 89/662/ԵՏՀ հրահանգի 18-րդ հոդվածում շարադրված կանոնների:

Հոդված 8

Մինչեւ 1998թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը Խորհուրդ կներկայացնի հաշվետվություն, որին կցված կլինեն էլեկտրոնային տվյալների փոխանցման եւ հավաստագրման ապահով մեթոդների հնարավոր օգտագործման առաջարկությունները:

⁵ ՊՏ թիվ L 255, 18.10.1968թ., էջ 23:

Խորհուրդն այդ առաջարկությունների հետ կապված որոշումները կընդունի որակյալ մեծամասնությամբ:

Հոդված 9

1. Նախքան 1998թ.-ի հունվարի 1-ը՝ անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի հետ համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Եթե անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ներպետական իրավունքի դրույթների տեքստը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 10

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1996 թվականի դեկտեմբերի 17-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Ի.Յատես